ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/01

ք. Արտաշատ «14» «հունվարի» 2019թ.

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Ա. Դերմոյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և Սպարապետ Վ.Սարգսյանի տուն-թանգարանը՝ ի դեմս Կ. Սարգսյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշումով հաստատված կարգի և «2019թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված N 1-ի աղյուսակ N 1-ի ՀՀ Արարատի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» կնքեցին սույն պայմանագիրը:

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան հատկացումների շրջանակներում Նվիրատուն Նվիրառուին է հատկացնում 12173,8 հազ. դրամ, այդ թվում ԱԱՀ/տասերկու միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր դրամ/ պահպանման ծախսերի համար:

2.Սուբսիդիան տրամադրելու և ծախսելու կարգը

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

2.2 Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Նվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Նվիրառուի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրառուին գումարները հատկացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Այլ դրույթներ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու

Արարատի մարզպետարան
Ք.Արտաշատ,Օգոստոսի 23/26
Ֆինանսների նախարարության Գ/Վ
h/h 900411068027
հվհհ 04204668
Գլխավոր քարտուղարի ժ/պ՝

_____ Ա. Դերմոյան

Նվիրառու

«Սպարապետ Վ.Սարգսյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
գ.Արարատ,Գարեգին Նժդեհի 7
ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
h/h 900428000443
հվհհ 04213428
Տնօրեն՝

_____ Կ.Սարգսյան